ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը՝

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ագնեսա ԽԱՄՈՅԱՆ
Հայկուհի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Օլգա ՍԱՖԱՐՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Լրագրողներ Գոհար Վեզիրյանի եւ Փայլակ Ֆահրադյանի դիմումների վերաբերյալ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել լրագրող Գոհար Վեզիրյանը՝ ընդդեմ լրագրող Փայլակ Ֆահրադյանի, որի ֆեյսբուքյան էջում փետրվարի 23-ին կատարված գրառման մեջ, ըստ դիմումատուի, առկա են իրեն արատավորող կեղծ տեղեկություններ եւ շահադիտական նկատառումներով պատվեր կատարելու մեղադրանք:

Փայլակ Ֆահրադյանը համաձայնել է, որ Դիտորդ մարմինը քննի բողոքը, եւ ինքը նույնպես դիմել է Դիտորդ մարմնին՝ ընդդեմ Newsbook.am տեղեկատվական կայքում (որի խմբագիրն է Գոհար Վեզիրյանը) հրապարակված *«Պատվերի թիկունքում Հովիկ Աբրահամյանն է. նամակագրություն»* հոդվածի, որում, ըստ դիմումատուի, իր անձնական նամակագրությունը հրապարակելով, լրատվամիջոցը թույլ է տվել էթիկական խախտում: Դիմումատուն պնդում է նաեւ, որ նույն հոդվածում կա իր հասցեին զրպարտություն՝ պատվեր կատարելու մեղադրանք:

Դիտորդ մարմինը 2016 թվականի մարտի 23-ի նիստում լսեց կողմերի փաստարկներն ու տեսակետները, քննարկեց վերոնշյալ բողոքները եւ առաջնորդվելով իր աշխատակարգի 5.1 հոդվածով, ըստ որի՝ «ԴՄ-ը ինքնակարգավորման նախաձեռնության անդամների կողմից կամ սույն աշխատակարգով նախատեսված դեպքերում՝ ոչ անդամների կողմից Վարքականոնի խախտման վերաբերյալ բողոքների քննության հիմքով կայացնում է կարծիք-եզրակացություն», ինչպես նաեւ՝ աշխատակարգի 5.8 կետով, ըստ որի՝ «Նախաձեռնության անդամ չհանդիսացող ԶԼՄ-ի կողմից Վարքականոնի խախտման վերաբերյալ բողոքները կարող են քննվել միայն վերջիններիս համաձայնության դեպքում», **արձանագրեց.**

Ա) ՓԱՍՏԵՐ

1. 2016 թվականի փետրվարի 16-ին ՀՀ Ազգային ժողովում միջադեպ է գրանցվել պատգամավոր Միհր Սեդրակյանի ու մի խումբ լրագրողների միջև: Միջադեպը լուսաբանել են Հայաստանի շատ լրատվամիջոցներ:

2. Փետրվարի 23-ին մի խումբ լրագրողներ այդ միջադեպի առնչությամբ ԱԺ դարպասների մոտ բողոքի ակցիա են կազմակերպել:

3. Նույն օրը, ակցիայի ավարտից հետո, ժամը 16:50-ին Newsbook.am կայքը հրապարակել է «Պատվերի թիկունքում Հովիկ Աբրահամյանն է. նամակագրություն» վերնագրով մի նյութ: Հոդվածում, առանց անուններ տալու նշվում է.

«...դեպքեր տեղի ունեցան, որոնք ապացուցելու են գալիս՝
ա. Միհր Սեդրակյանի դեմ իրականացված քայլերն իսկապես կազմակերպվում և ուղղորդվում են,
բ. այդ ամենի հետևում կանգնած է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը,
գ. Միհր Սեդրակյանի դեմ լրագրողների ստորագրահավաքին միացել է 7 պատգամավոր՝ 2-ը պաշտոնապես դեռևս համարվում են ՀԱԿ խմբակցության ներկայացուցիչներ, 2-ը «ժառանգությունից» են, մեկն անկախ պատգամավոր է, իսկ ահա մյուս 2-ը՝ ԲՀԿ խմբակցությունից են: Իսկ ԲՀԿ-ն, ինչպես հայտնի է, դարձել է Աբրահամյանի գրպանային քաղաքական ուժը և դրա՝ ղեկավարի մակարդակով ստորագրահավքին միանալը, հնարավոր կլիներ բացառապես համապատասխան հրահանգի դեպքում: Այս մասին է վկայում այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության «Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ի ղեկավար Տիգրան Աբրահամյանը, որը փաստացի համարվում է Հովիկ Աբրահամյանի աշխատողը, որոշակի հետաքրքրվածություն է ցուցաբերում լրագրողների՝ այս թեմայով հրապարակումների մասով: Ավելին՝ Աբրահամյանն այդ հարցն ուղղակիորեն քննարկում է այն լրագրողի հետ, որը առաջինն է լսել նախիր բառը և ակտիվորեն հետամուտ եղել հարցի բարձրաձայնմանը»:

Եվ իբրեւ ապացույց ներկայացված է նաեւ Փայլակ Ֆահրադյանի եւ ՀՀ կառավարության «Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ի ղեկավար Տիգրան Աբրահամյանի նամակագրության մի հատվածի լուսապատճենը:

4. Ի պատասխան դրա, լրագրող Փայլակ Ֆահրադյանը նույն օրը, ժամը 21:47-ին գրառում է կատարել իր ֆեյսբուքյան էջում, որում մասնավորապես, ասվում է.

«Հիմա, ինչն է ստիպում Գոհար Վեզիրյանին, թաքնվելով լրատվության ետևում՝ պաշտպանել Միեր Սեդրակյանին.
1. Միեր Սեդրակյանը Գոհար Վեզիրյանի քավորն է
2. Միեր Սեդրակյանն անձնական կապեր ունի Գոհար Վեզիրյանի հորեղբոր հետ՝ իրենց աշխարհում
3. Եվ ամենակարևորը. Միեր Սեդրակյանը բոլորովին վերջերս լուծել է Էրեբունի վարչական շրջանում Գոհար Վեզիրյանի թանկարժեք բնակարանի հարցը:
Ահա այս ամենն ու դեռ ավելին են ստիպում Գոհար Վեզիրյանին սեփական շահից ելնելով՝ միֆեր ստեղծել ակցիայի շուրջ, թե իբր Միեր Սեդրակյանի որդու և Հովիկ Աբրահամյանի որդու կռիվն է»:

5. Գոհար Վեզրիյանը Դիտորդ մարմնին տեղեկացրել է, որ Միեր Սեդրակյանն իր քավորը չէ, նրա հետ չունի որեւէ անձնական կամ գործնական կապ, ավելին՝ ինքը, լինելով նույն վարչական շրջանի բնակիչ, կոնֆլիկտ է ունեցել Սեդրակյանի հետ:

Բ) ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1087.1
« 3. Սույն օրենսգրքի իմաստով՝ զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը եւ արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»:

2. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 7.
«Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները».
«2. Արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին զգուշացնելու, եւ այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար եւ դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել: Սույն հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաեւ մարդու անձնական եւ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»:

3. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 9.
«Լրատվական գործունեություն իրականացնողի պատասխանատվությունը».

«3. Օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող տեղեկատվության տարածման համար լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվության ենթակա չէ, եթե այդ տեղեկատվությունը նա ձեռք չի բերել օրենքով արգելված եղանակով, կամ ակնհայտ չի եղել, որ դա օրենքով սահմանված կարգով գաղտնիք է համարվել:
Եթե լրատվական գործունեություն իրականացնողը տարածել է այնպիսի տեղեկատվություն, որի՝ օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվելն ակնհայտ է եղել, սակայն այդ տեղեկատվության տարածումը բխել է հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, ապա նա պատասխանատվության ենթակա չէ»:

4. Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր, Սկզբունք 1. ***Ճշգրտություն եւ անկողմնակալություն.***

«Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝
1.1. մինչ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.4. վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի եւ հավաստի տեղեկությունների վրա»:

5. Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր, Սկզբունք 4. ***Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ.***

«Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝
4.1. պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական եւ ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության եւ նամակագրության նկատմամբ:
Բացառապես հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հրապարակումը»:

6. Դիտորդ մարմնի ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ *Սոցիալական ցանցերում խմբագրությունների աշխատակիցների վարքի կանոնների վերաբերյալ.*

«Տեղեկություն տարածելու կամ անձնական նպատակով սոցիալական ցանցերից օգտվելիս միշտ պետք է հիշել, որ դուք, ամեն դեպքում, տվյալ լրատվամիջոցի ներկայացուցիչ եք, ուստի ձեր վարքը կարող է ազդել լրատվամիջոցի հեղինակության վրա: Հետեւաբար, հարկ է առաջնորդվել որոշակի կանոններով:
... Սոցիալական ցանցերում լսարանի հետ ավելի անմիջական և մտերմիկ շփվելու դեպքում էլ չպետք է մոռանալ, որ պետք է պահպանել լրատվամիջոցի հեղինակությունը: Սոցիալական ցանցում տարածած ամեն հղում կամ գրած ամեն մեկնաբանություն հանրային տեղեկություն է՝ անկախ նրանից, թե դիտելիության ինչ կարգի սահմափակումներ են դրվել»:

Գ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Գոհար Վեզիրյանն ընդդեմ Փայլակ Ֆահրադյանի բողոքի վերաբերյալ.

- Լրագրող Փայլակ Ֆահրադյանի ֆեյսբուքյան գրառումը լրագրողի հրապարակային վարքի դրսեւորում է:

- **«Մեր Սեդրակյանը Գոհար Վեզիրյանի քավորն է», «Մեր Սեդրակյանն անձնական կապեր ունի Գոհար Վեզիրյանի հորեղբոր հետ...», «Եվ ամենակարևորը. Մեր Սեդրակյանը բոլորովին վերջերս լուծել է Էրեբունի վարչական շրջանում Գոհար Վեզիրյանի թանկարժեք բնակարանի հարցը»** տեղեկությունները չունեն փաստացի հաստատում, հետեւաբար այդ գրառմամբ խախտված են «Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրի» 1.1 եւ 1.4 կետերի (տես սույն եզրակացության՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ բաժնում) պահանջները:

- Այդ տեղեկություններն ինքնին կարող էին արատավորող բնույթ չունենալ: Սակայն երբ դրանք ուղեկցվում են «**Հիմա, ինչն է ստիպում Գոհար Վեզիրյանին, թաքնվելով լրատվության ետևում՝ պաշտպանել Մեր Սեդրակյանին» եւ «Ահա այս ամենն ու դեռ ավելին են ստիպում Գոհար Վեզիրյանին սեփական շահից ելնելով՝ միֆեր ստեղծել ակցիայի շուրջ»** եզրահանգումներով, ակնհայտ է դառնում, որ չճշտված եւ չհաստատվող տեղեկությունները հրապարակվել են լրատվամիջոցը անձնական եւ այլոց շահերին ծառայեցնելու մեղադրանք ներկայացնելով՝ Գոհար Վեզիրյանի պատիվը, արժանապատվությունը վիրավորելու եւ գործարար համբավը արատավորելու նպատակով:

2. Փայլակ Ֆահրադյանն ընդդեմ Newsbook.am կայքի բողոքի վերաբերյալ.

- Թեպետ Գոհար Վեզիրյանը պնդում է, որ Փայլակ Ֆահրադյանի նամակագրության լուսապատճենի հրապարակումը հանրային շահ է հետապնդում, այսուհանդերձ Դիտորդ մարմինը կարծում է, որ տվյալ դեպքում հանրային շահի գերակայությունն ակնհայտ չէ: Առավել եւս հարկ էր ձեռնպահ մնալ լուսապատճենը հրապարակելուց, քանի որ այն, ըստ էության, ստացվել է ոչ օրինական ճանապարհով: Հետեւաբար, Դիտորդ մարմինը համարում է, որ խախտված է «Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրի» 4.1 կետի (տես սույն եզրակացության՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ բաժնում)՝ մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը հարգելու պահանջը: Ըստ այդմ Դիտորդ մարմինը հիմնավորված չի համարում նաեւ Փայլակ Ֆահրադյանի կողմից պատվեր կատարելու մասին Newsbook.am կայքի հոդվածի պնդումը:

Գ) ԴԻՄՈՒՄ ԿՈՂՄԵՐԻՆ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ

1. Դիտորդ մարմինը դիմում է կողմերին՝ առաջարկելով այսուհետ զերծ մնալ անձնական կամ այլ շահերին ծառայելու փոխադարձ մեղադրանքներից, առավել ևս դրանց տարածման համար մասնագիտական գործունեության՝ զանգվածային լրատվության միջոցների հարթակն օգտագործելուց: Ավելին՝ հարկ է, որ հանրային կարեւոր իրադարձությունները լուսաբանելիս կողմերը և լրատվամիջոցներն առհասարակ առաջնորդվեն մասնագիտական գործունեության էթիկական սկզբունքներով:

2. Պետք է հաշվի առնել, այնուամենայնիվ, որ յուրաքանչյուր դեպքում երրորդ անձի կամ կազմակերպության կողմից այս կամ այն լրատվամիջոցի գործունեության վրա ենթադրյալ ազդեցության մասին ոչ բավարար հիմնավորված տեղեկատվության տարածումը կարող է ստվերել ոչ միայն կոնկրետ լրատվամիջոցի, այլև լրագրողական հանրության գործունեությունն ընդհանրապես:

«Լրատվական պատերազմներին» բնորոշ նման գործելակերպը, վատթարագույնն է, որ կարող է խաղարկվել լրատվամիջոցների ներքին հարաբերություններում: Լրագրողն ու լրատվամիջոցն այսպիսով կարող են, անգամ չցանկանալով, վերածվել մանիպուլյատիվ գործիքների՝ տնտեսական, քաղաքական, վարչական կամ այլ շահեր հետապնդող ուժերի ձեռքին՝ կորցնելով իրենց հանրային առաքելության իրացման համար կարևորագույն պայմանը՝ անկախությունը:

Դիտորդ մարմինը կողմերին, ինչպես նաեւ Հայաստանի լրատվամիջոցներին հորդորում է զերծ մնալ «հաշվեհարդարի»

այնպիսի դրսեւորումներից, որի շրջանակներում «հակադիր ճամբարի» գործընկերոջը «քողազերծելու» կամ նրա քայլերը «գաղտնազերծելու» մղումը կարող է ներկայացվել կամ արդարացվել հանրային հնչեղություն ունեցող տեղեկություն տարածելու նպատակի ներքո: Նման վարքագիծը լրագրողական համայնքի կյանքում վտանգավոր երևույթ է, որը կարող է հանգեցնել ոչ միայն վերջիններիս գործունեության նկատմամբ վստահության կորստին և գործունեության ձախողմանը, այլև ձևավորել հակադիր շահեր ունեցող խմբերի կողմից վերահսկվող լրատվական դաշտ: Այս առումով լրագրողների համար երիցս կարևորվում են նյութերի պատրաստման ու մատուցման այնպիսի եղանակներն ու մեթոդաբանությունը, որոնք ընթերցողների մոտ միանշանակ կնվազեցնեն այս կամ այն ստվերային ազդեցությունների ներքո գտնվելու մեջ մեղադրանքներն ու կասկածները:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2016 թվականի մարտի 23-ի նիստում, Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով.

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, «Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր
Հայկուհի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ նախագահ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ, «A1+» հեռուստաընկերության տնօրեն
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, “Newmag” ամսագրի գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ, «Շողակաթ» հեռուստաընկերության գեղարվեստական ղեկավար
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 42-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: